ՀՀ ԿԳՄՍ նախարարության

Ժամանակակից արվեստի վարչության պետի

պարտականությունները կատարող

տիկին ԼԻԼԻԱ ՆԻԿՈՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

18.05.2020 թ.-18.08.2020 թ. նախարարության ժամանակակից արվեստի վարչության փորձագետի գործունեության վերաբերյալ

1. Նշյալ ժամանակահատվածում ստացել եմ շուրջ 120 մտից գրություն՝ դրամաշնորհային մրցույթի, մի շարք բովանդակային հաշվետվությունների, պայմանագրերի, հրամանների վերաբերյալ, պատրաստել եմ 100 ելից գրություն և փաթեթ, արխիվացրել շուրջ 60 փաթեթ, հրամաններ և նյութեր:
2. Ամփոփել եմ Թատերարվեստի ոլորտի 2020թ. 6 ամսվա հաշվետվությունները և ոչ ֆինանսական ցուցանիշները, ուսումնասիրել, պատրաստել և համապատասխանաբար տրամադրել եմ եզրակացություններ:
3. Իմ իրավասության սահմաններում մասնակցել եմ ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով իրականացվող դրամաշնորհային մշակութային ծրագրերի մրցույթի «Թատերարվեստի ստեղծագործական նախագծեր և միջոցառումներ» անվանակարգում հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ կնքվող դրամաշնորհների պայմանագրերի բովանդակային դրույթների կազմմանը:
4. Նախարարության կայքում տեղադրելու համար՝ պարբերաբար պատրաստել և ներկայացրել եմ Թատերարվեստի ստեղծագործական ծրագրերի, միջոցառումների վերաբերյալ տեղեկույթներ:
5. Իրականացրել եմ Թատերահամերգային կամակերպությունների կողմից իրականացված շուրջ 130 տարաբնույթ միջոցառումների բովանդակային հաշվետվությունների վերլուծություններ, պատրաստել եմ տույժերի նամակներ,

եզրակացություններ, ընդունման-հանձնման ակտեր, նախաձեռնել եմ ամբողջական նյութերի հավաքագրում:

6. Տրամադրել եմ ՊՈԱԿ-ներից պահանջվող մի շարք իրավական փաստաթղթեր:
7. Կազմել եմ Վարչության ամենամյա տաբելը:
8. Վարչության պետի հանձնարարությամբ կատարել եմ այլ ընթացիկ աշխատանքներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության ժամանակակից

արվեստի վարչության փորձագետ՝ **ԷԼԻՆԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

31.08.2020 թ.